

Հ Ր Ա Մ Ա Ն N 467-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«31» ՕԳՈՍՏՈՍԻ 2018 Թ.

ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ

**«ԵՐԵՎԱՆ» ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆՈՏԱՐ ԷԼՄԻՐԱ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԵՐԵՎԱՆ» ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ
ՆՈՏԱՐ ԱՍՏԴԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով և 22-րդ հոդվածի 4-րդ մասով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության նոտարական պալատի նախագահ Վ. Հովսեփյանի 2018 թվականի օգոստոսի 29-ի N ԵՆՊ-629/18 գրությունը և «Երևան» նոտարական տարածքի նոտար Է. Դանիելյանի դիմումը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. 2018 թվականի սեպտեմբերի 12-18-ը ներառյալ «Երևան» նոտարական տարածքի (նստավայր՝ «Կենտրոն 2») նոտար Էլմիրա Դանիելյանի ժամանակավոր բացակայության ընթացքում նրա կողմից «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-56-րդ և 58-63-րդ հոդվածներով նախատեսված նոտարական գործողություններ կատարելու, ինչպես նաև վավերացված գործարքներում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու կամ դրանք վաղակետ լուծելու լիազորությունները վերապահել «Երևան» նոտարական տարածքի (նստավայր՝ «Կենտրոն 2») նոտար Աստղինե Միքայելյանին:

ԱՐՏԱԿ ԶԵՅՆԱԼՅԱՆ

31.08.2018

X 

Artak Zeynalyan